# ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Այբ» կրթական հիմնադրամի միջև հետագա համագործակցության մասին

ք. Երևան 1 հոկտեմբերի 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարարի տեղակալ Ա. Անափիոսյանի, և «Այբ» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Մ. Մամիկոնյանի, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Կողմերը «Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում» Ծրագրի՝ «Արարատյան բակալավրիատի» (այսուհետ՝ ԱԲ) ամբողջական կամ մասնակի իրականացման հնարավորությունն ուսումնասիրելու և քննարկելու նպատակով սույն Համաձայնագրով ամրագրում են փոխհամագործակցության հետևյալ ելակետային դրույթները՝

ա. «Այբ» կրթական հիմնադրամը ՝ Նախարարության կողմից ԱԲ ծրագրի ամբողջական կամ մասնակի իրականացման հնարավորությունն ուսումնասիրելու և քննարկելու նպատակով նախարարության հետ համատեղ կիրականացնի աշխատանքներ ՀՀ հանրակրթական հաստատություններում ԱԲ ծրագրի ներդրման քաղաքականության մշակման ուղղությամբ:

բ. Կողմերը կձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները ԱԲ ծրագրի միջազգային ճանաչման պահպանման և ծրագրի շարունակականության ապահովման նպատակով:

**Նախարարություն**

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 3 շենք
Նախարարի տեղակալ՝

______________ Ա. Անափիոսյան

**Կազմակերպություն**

«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0009, Կորյունի փ. 19 ա, 9-րդ հարկ
Գործադիր տնօրենի Ժ/Պ՝

______________ Մ. Մամիկոնյան